«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 130822 30 08 2023թ.

ԵՊՀ-Ի ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՄԻՋԻՆ ՈՐԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ (ՄՈԳ-Ի) ՇԵՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողներին ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով, ղեկավարվելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4.3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Երևանի պետական համալսարանի ռեկտորի 2023թ. օգոստոսի 28-ի №163/25-Լ հրամանը՝

հրամայում եմ.

1. ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղում 2023-2024 ուսումնական տարում միջին որակական գնահատականի (ՄՈԳ-ի) շեմը սահմանել.

1) բակալավրիատի առաջին և երկրորդ կուրսերում սովորող ուսանողների համար՝ 13.00 (տասներեք), բակալավրիատի մնացած կուրսերում՝ 11.00 (տասնմեկ),

2) մագիստրատուրայի առաջին և երկրորդ կուրսերում սովորող ուսանողների համար՝ 16.00 (տասնվեց):

2. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի ուսանողներին և աշխատողներին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ